Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պող. 27/8 հասցեում գտնվող հեծանվահրապարակի պահպանման և շահագործման ծառայության ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/33 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.02.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Յու. Մամիկոնյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաղրամյան /գնահատող/, Լ. Մուրադյան /գնահատող/
Ա. Գասպարյան /բացող/, Մ. Աբրահամյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/33» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Յու. Մամիկոնյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի փետրվարի 27-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/33 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Յու. Մամիկոնյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Հայաստան» Մարզական հասարակական կազմակերպություն

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Յու. Մամիկոնյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1. Հեծանվահրապարակի վարչական շենքի և հարակից տարածքի մաքրման պահպանման և շահագործման ծառայություն				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	9000000	7,470,000	1,494,000	8,964,000
«Հայաստան» Մարզական հասարակական կազմակերպություն		8,999,000		8,999,000
2. Հեծանվահրապարակի վարչական շենքի և վազքուղու շահագործման և պահպանման ծառայություն				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		

		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	23000000	19,100,000	3,820,000	22,920,000
«Հայաստան» Մարզական հասարակական կազմակերպություն		22,999,000		22,999,000

3. Հեծանվահրապարակի սարքերի և սարքավորումների շահագործման, վերանորոգման և պահպանման ծառայություն

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	17500000	14,550,000	2,910,000	17,460,000
«Հայաստան» Մարզական հասարակական կազմակերպություն		17,499,000		17,499,000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Յու. Մամիկոնյան)

Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«Հայաստան» Մարզական հասարակական կազմակերպություն	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Յու. Մամիկոնյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 4-րդ կետով ընդունած որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ «Հայաստան» Մարզական հասարակական կազմակերպությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Յու. Մամիկոնյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ 28.02.2019թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 28.02.2019թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները

հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Յու. Մամիկոնյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերը ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Յու. Մամիկոնյան

Անդամներ՝ ---------- Ա. Բաղրամյան

---------- Ա. Գասպարյան

---------- Մ. Աբրահամյան

---------- Լ. Մուրադյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան